




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
Յ Ե Վ
ՈՒՍՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ**



571.1
2-85

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — № 205.

Յ Ե Ր Ե Վ Ա Ն — 1925.

1 MAR 2010

371.1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑ. ԽՈՐՀՐԴ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գրողները բոլոր յերկրներն են, միացե՛ք.

ԱՇՈՑ ԳՈՎԱՆՆԻՍՅԱՆ

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ
ՈՒՍՈՒՑԶՈՒԹՅՈՒՆԸ

(Զեկուցում Համահայաստանյան Ուսուցչական
Ս.Ն.Գրանիկ Համագումարում)



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ—№ 205.

Ե Ե Ե Դ Ե Ե

1925 p.

13 JUN 2013



24445.59

Պատ. 1840

Տերեստի I Տպարան

Տիրաժ 5000

Ընկերներ, այս նյութն ավելի ընդարձակ խընդ-
րի մի մասն է: Պրոլետարական հեղափոխության և
ուսուցչության հարցը ինտելիգենցիայի և պրոլետա-
րական հեղափոխության խնդրի կոնկրետ մի ձևա-
կերպությունն է: Վերջին խնդիրը կազմում է իմ նյու-
թի տեսական ու քաղաքական ֆոնը: Ուստի թույլ
տվեք նախ և առաջ կանգ առնել այստեղ իմ գեկուց-
ման հետ կապված այն ընդհանուր հարցերի վրա, վոր
պարփակված են ինտելիգենցիայի ու պրոլետարա-
կան հեղափոխության պրոբլեմի մեջ:

**ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ ԵՄՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**

Այստեղ անհրաժեշտ է պարզել նախ և առաջ
սկզբունքային մի քանի մոմենտներ: Յուրաքանչյուր
հեղափոխություն առաջանում է հասարակության հիմ-
նական դասակարգերի բաղխումից: Ինտելիգենցիան
հասարակական դասակարգ չէ, վոչ ել հասարակական
միատարր մի զանգված: Հասարակական յուրաքան
չյուր դասակարգ ունի իր ինտելիգենցիան: Մենք
խոսում ենք կուսակցական ինտելիգենցիայի մասին,
յիբբ գործ ունենք հասարակական վորեև դասակար-
գի հետ կապված, այդ դասակարգի հասարակա-
քաղաքական շահերը պաշտպանող և այդ շահերի հա-

մար պայքարող ինտելիգենտական ավանգարդի հետ։ Յեւ թափախուած ենք անկուսակցական ինտելիգենցիայի մասին, յերբ նկատի ունենք ինտելիգենտական այն մասսան, վոր դասակարգի մարտական ավանգարդից դուրս ե գտնվում ե սոսկ հասարակական-քաղաքական իշխանության միջոց ե, հաճախ ակամա ու անգիտակից, բայց ե այնպես, կրկնում եմ, միջոց ե տիրապետող դասակարգի ձեռքին։ Հաճախ իր ծագումով, իր շահերով, իր ներքին հակումներով ու ձգտումներով անկուսակցական այդ ինտելիգենցիան կարող ե խորթ լինել տիրող դասակարգին։ Սակայն այնչափ, վորչափ այդ ինտելիգենցիան քաղաքականապես չի ձևակերպում իր դիրքը ե չի պայքարում տիրող դասակարգի դեմ, այնքան նա գործիք ե դառնում այդ դասակարգի ձեռքին։ Ինտելիգենտական այդ մասսան ե հենց, վոր կազմում ե գլխավորապես տիրող դասակարգի շահերին ծառայող իշխանության տեխնիքական ապարատը։

Այստեղից պարզ պետք ե լինի նաև դեպի քաղաքական իշխանություն ձգտող կամ քաղաքական իշխանություն ունեցող պրոլետարիատի ե իր կուսակցության վերաբերմունքը դեպի ինտելիգենցիան։ Պրոլետարիատն ու իր կուսակցությունն անհաշտ կռիվ են մղում հարստահարող դասակարգերի շահերը պաշտպանող ամեն կարգի կուսակցական ինտելիգենցիայի դեմ։ Սակայն այնքան, վորքան պրոլետարիատը կամ նրա կուսակցությունը նվաճում ե քաղաքական իշխանություն, կազմակերպում ե իշխանության նոր ապարատ, նա ձգտում ե միաժամանակ ոգտադործել նաև հին, փշրված ապարատի բաղադրիչ

մասերը, աշխատում ե ստորագրել նրանց իր նպատակներին, նրանց միջոցով կազմակերպել պրոլետարական պետականությունն ու հասարակայնությունը։

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՎ, ՀԱՅ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ

Հեռու չվազենք որինտիկ հետից։ Վերցնենք մեր իրականությունը։ Կա հայ կղերականություն, կա նրան սպասարկող կղերական ինտելիգենցիա։ Մենք բացասական վերաբերմունք ունենք դեպի հայ կղերականությունը ե պայքարում ենք մանավանդ նրա առաջամարտ ինտելիգենցիայի դեմ։ Կա ստորին կղերականություն, գյուղական քահանաները ե այլն, վոր պայքարում ե յեկեղեցական հիերարխիայի դեմ։ «Կենդանի» կամ «ազատ» յեկեղեցին այդ պայքարի արձագանքն ե։ Մենք կովում ենք նաև «ազատ» կամ «կենդանի» յեկեղեցու դեմ։ Սակայն յեկեղեցու ներսում արժարժվող պայքարը հաշվի չենք առնում, վորպես զրական մի յերևույթ, վոր բնորոշում ե իրենով յեկեղեցու ընդհանուր քայքայումը։ Այս ըմբռնումն ունենալով, մենք քաղաքականապես սխալ պիտի համարեյինք անհանդուրժող վերաբերմունք հայտնաբերել դեպի նոր յեկեղեցին, վորովհետև նման վերաբերմունքը կը նշանակեր գործնականապես պաշտպանել հին յեկեղեցին, մի բան, վոր ռամկավարների ե դաշնակցականների գործն ե, բայց վոչ մեր։

Վերցնենք հիմա ռամկավար ինտելիգենցիան։ Գաղութներում գործնական վորող ինդիվիդուալները մինչև այժմ մենք հնարավոր եյինք համարում

զրուցել հայ բուրժուազիայի ներկայացուցիչներին հետ։
Պայքարելով գաղութահայ բուրժուազիայի դեմ առ-
հասարակ, մենք անհաշտ եյինք, մանավանդ իր գա-
ղափարական ավանգարդի, ուսակալար կուսակցու-
թյան վերաբերմամբ։ Ռամկավար ինտելիգենցիան,
բնականաբար, իր հերթին, մեր բարեկամը չէր կա-
րող լինել, քանի վոր, պինդ նստած ազգային բա-
րեգործական դրամագլուխերի վրա, դաշնակցական-
ների հետ մեկտեղ, ամենից քիչը նա յեր շահա-
գրգռված, վոր այդ դրամագլուխների վերաբերմամբ
գործնական վորևե համաձայնություն կնքվեր մեր
և գաղութահայ բուրժուազիայի միջև։

Գնաք, վերջապես, Դաւենակցութեամբ։ Վտարե-
ով մեր յերկրից, գաղութներում շարունակում ենք
այդ կուսակցութեան հետ մեր կոխվել։ Սակայն,
համոզված ենք, վոր ինչպես Հայաստանում, նույն-
պես և գաղութներում, այդ կուսակցութեանից յե-
րես պիտի դարձնեն, վոչ միայն աշխատավորութեան
մասսաները, այլև շարքային այն դաշնակցականները
և զրանց թվում նաև այն շարքային ինտելիգենտ-
ները, վորոնք մինչև այժմ ղեռ ղեգերում են հին
դիրքերում։ Մենք համոզված ենք դրանում և հարկը
պահանջած դեպքում չենք զլանա ցույց տալու այդ
կարգի ինտելիգենտներին մեր աջակցությունը։

Յեթև անդրադառնաք հիմա հայ աճկուսակ-
ցական ինտելիգենցիային, կարոտ չե հատուկ հայտա-
րարութեան, վոր նրա լավագույն հատվածը մեզ հետ
ե, դնահատում և խորհրդային իշխանութեան կա-
տարած աշխատանքը և պատասխանատու զեր և կա-
տարում մեր կյանքի բոլոր բնագավառներում։ Առա-

ջին հերթին պիտք և ասել այդ, բնականաբար, Հա-
յաստանի ուսուցչութեան անկուսակցական մասայի
վերաբերմամբ։

ԶԱՐԳԱՅՄԱՆ ՅԵՐԵՔ ԵՏԱՊ

Ի հարկ ե, ուսուցչութեանը ևս միտադրը դանդ-
ված չի։ Միակերպ ու անփոփոխ չէր կարող լինել
նաև նրա վերաբերմունքը դեպի պրոլետարական
հեղափոխութեանը։ Այդ վերաբերմունքը հասկանալու
համար անհրաժեշտ և ամենից առաջ պարզել մասսա-
յական ուսուցչութեան սոցիալական նկարագիրը և
գծել այն ուղին, վորով ընթացել և ուսուցչութեանը
խորհրդային Միութեան սահմաններում։

Ընդհանուր առմամբ պիտի արձանագրել, վոր
ուսուցչական մասսան միշտ ել տնտեսական ավելի
խեղճ վիճակ և ունեցել, քան ինտելիգենցիայի վորևե
այլ հատվածը։ Բուրժուազիան և իր պետութեանը
յերբեք ել չազ ոռնիկներ չեն տվել ժողովրդական
դպրոցի ուսուցչին։ Համեմատաբար նախանձելի վիճակ
և ունեցել այսպես կոչված միջնակարգ դպրոցի ուսու-
ցիչը, վոր զլխավորապես կապված և յեղել քաղաքա-
յին բուրժուազիայի և մեղչանութեան հետ։ Սակայն
նախանձելի վիճակ չի ունեցել ուսուցչական մասսայի
ամենախոշոր հատվածը՝ ժողովրդական ուսուցչութեանը,
վորի խոշորագույն տոկոսը կազմում և գյուղա-
կան ուսուցչութեանը։ Այս կարևոր և արձանա-
գրել, ուսուցչական այդ մասսայի ընդհանրապես
ընդիմադիր, սոցիալիստական նարոգնիկական նկա-
րագիրը հասկանալու համար։ Կարևոր և շնչոնել, վոր
ուսուցչութեան այդ մասսան կապված և գյուղի հետ

վոչ միայն պաշտոնի բերումով, այլև շատ հաճախ իր ծագումով: Գյուղացիությունը ժողովրդական ուսուցչի սոցիալական պատվանդանն է կազմել: Սյս գրությունը բացառում է մեզ վոչ միայն ռուս մասսայական ուսուցչի համակրանքը գեպի բուրժուական հեղափոխությունը, այլև մեր ցեղային բնամական գիրքն ու սաբոթաժը հանգեպ պրոլետարական հեղափոխության: Այս դիրքը փոխվել է միայն վերջին յերեք չորս տարիների ընթացքում: Ժողովրդական ուսուցիչը յերես դարձրեց բուրժուական գեմոկրատիայից յեվ գիմազարձ յեղավ գեպի խորհրդային իսկառությունը: Իսկ ներկայումս, յերբ արձանագրում ենք ուսուցչական մասսայի մեջ արդեն իսկ կատարված այդ բեկումը, պիտի նախատեսել նաև, վոր այդ՝ ուսուցչության քաղաքական կերպարանափոխության սկիզբն է միայն: Ուսուցչական մասսայի բարյացակամ չեզոքությունն ու պասիվ համակրանքը մեք ուրեք փոխանցվում է պրոլետարական հեղափոխության ակտիվ գործակցության: Մասսայական ուսուցչությունը գտնվում է այսօր իր Հոկտեմբերի նախորդակին:

Դեպի պրոլետարական հեղափոխությունն ուսուցչական մասսայի հայտնաբերած այդ վերաբերմունքի զարգացման այս հտապներին համապատասխանում է մեր կուսակցության դեպի մասսայական ուսուցիչը ցուցադրած վերաբերմունքի զարգացման յերեք շրջան: Ուսուցչության և հեղափոխության հարաբերությունը յերկկողմանի հարաբերություն է: Ուսուցչության վերաբերմունքին դեպի պրոլետարական հեղափոխությունը համապատասխանում է միշտ

պրոլետարական կուսակցության վերաբերմունքը դեպի ուսուցչությունը: Հոկտեմբերյան հեղափոխության առաջին շրջանում մենք պայմարում եյինք ուսուցչության դեմ, վորչափ վերջինս շաղկապում էր իր բախտը ժամանակավոր կառավարության և սրան նեցուկ կանգնած կուսակցությունների հետ: Նոր տնտեսական քաղաքականության առաջին տարիներին՝ կուսակցությունը հաղթահարելով ուսուցչության սաբոթաժը, ընդգծում է ուսուցչական մասսային մերձեցալու կարևորությունը: Ներկայիս՝ կուսակցությունն առաջադրում է արդեն մասսայական ուսուցչության հետ գիճակցություն կնքելու խնդիրը:

ՈՒՍՈՒՅՁՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԵԿՈՒՄԸ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ինչո՞վ բացատրել բացասական այն վերաբերմունքը, վոր հայտնաբերեց ուսուցչությունը պրոլետարական հեղափոխության առաջին շրջանում՝ ռազմական կոմունիզմի ժամանակ: Ինչո՞վ բացատրել այն յերևույթը, վոր մասսայական սաբոթաժն ուսուցչության արհեստն ու արվեստը դարձնում էր բուրժուական ռեստավրացիայի զենքերից մեկը: Այս յերևույթն ըմբռնելու համար հաբկավոր է աչքի առաջ ունենալ ուսուցչության յեվ գյուղացիության այն առնչությունը, վոր ընդգծեցինք արդեն: Հոկտեմբերի նախորդին և Հոկտեմբերին հաջորդող տարիներին գյուղացիության մի խոշոր մասը գնում էր նարդոնիկական կուսակցությունների հետևից: Ռազվորստկայի քաղաքականությունն ամրացրեց գյուղացիության և բուրժուազիայի կապը, հանգամանք, վոր սգտա-

գործեցին Կոլչակը, Դենիկինը և Յուդենիչն իրենց առաջնադաս թյուրեմների ժամանակ: Սակայն հակահեղափոխության ունեցած հաջողությունները գյուղացիական լայն մասսաներին իսկ պարզեցին բուրժուական դեմոկրատիայի ռեակցիոն բնույթը, մասնավորապես հողային խնդրում: Բուրժուազիայից ու կալվածատերերից վերջնականապես հուսախաբված՝ գյուղացիական մասսաներն ապստամբում են բելոգվարդիական զենեքալների դեմ՝ գործնականապես զինակցելով պրոլետարական ծավալվող հեղափոխության հետ: Գյուղացիության այս բեկումն է ամենից առաջ, վոր անգրագիտում է նայել մասսայական ուսուցչության բազմազան ֆորմալիզմը և ամենից վրա:

Սոցիալական այս հիմնական պրոցեսների հանդեպ, ռազմական կոմունիզմի շրջանում ուսուցչական մասսայի աննախանձելի նյութականը, ուսուցչի ստացած դաստիարակությունն ու իդեոլոգիական կոնսերվատիզմը յերկրորդական նշանակություն ունեցող գործոնների շարքը պիտի դասվեն: Այդ գործոնների նշանակությունը պիտի չեղքանար նոր տնտեսական քաղաքականության պայմաններում, յերբ տնտեսության վերելքը հնարավորություն տվեց բարելավելու ուսուցչության կենցաղը, և հեղափոխությանն առաջադրված նոր խնդիրների թելադրանքով, ավելի ուշադիր վերաբերմունք հայտնաբերել նաև դեպի նրա հասարակական-քաղաքական խնդրագործությունը: Պակաս կարևորություն չունի հարկավ նաև այն խոշոր ժողովրդականությունը, վոր նվաճել և խորհրդային իշխանությունն աշխատավո-

րության լայն մասսաների մեջ, Լենինյան կոչի արձագանքը, Լենինյան իրավունքային և պրոլետարական կազմակերպության աճումը քաղաքում և գյուղում չեղին կարող չանդրադառնալ նաև ուսուցչական մասսայի վրա: Մասնայական ուսուցիչը քաղաքում և գյուղում գործ ունի նախ և առաջ այս տարրերի հետ: Ուսուցիչը համակերպվում է իր լսարանին ու անմիջական շրջապատին: Այդ տեսակետից մեծ իմաստ կա ընկ. Սիմակի պատկերներին ուղղած յերեկվա խոսքի մեջ, յերբ ասում եր, թե պատկերն ուսուցչի համար դաստիարակող գործոն է:

ՈՒՍՈՒՅՑՈՒԹՅԱՆ ՎՍԱԳԱՅԱԿԱՆ ԴԻՄԱԴԱՐՁԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մեզանում դրությունն ավելի աննպաստ եր: Մասնայական ուսուցիչը մեզանում դաստիարակվել եր ծխական համայնքի շրջանում: Մեր դպրոցը ծխական դպրոց եր, մեր ուսուցիչը ծխական ուսուցիչ՝ յեկեղեցական հոգաբարձության հսկողությանն ու քմահաճույքին յենթակա: Մի հարկ ավելի բարձր՝ գործ կոնենանք հոգևոր սեմինարիաների հետ: Իսկ լուսավորական այս ամբողջ ցանցը պսակում եր Եջմիածնի հոգևոր ճեմարանը: Հարկավ կար այստեղ վորոշ աններդաշնակություն: Կար ընդգծված ներհակություն դպրոցի հոգևոր ձևի և աշխարհիկ բովանդակության միջև: Այն չափով, ինչ չափով հասարակականորեն թուլացող կղերի տեղը բռնում եր բուրժուազիան և քաղքենիությունը, այն չափով, ինչ չափով հասարակական այս կատեգորիաներն իրենց տիրապետության գործիք են դարձնում կղերն ու իր

հոգևոր ապարատը, այդ չափով աշխատել է նացիոնալիզմը բռնում և տապալված կղերականության տեղը նաև ծխական դպրոցի ու հոգևոր սեմինարիայի ներսում: Աշխարհիկ նացիոնալիզմը զծուռ և հոգևոր դպրոցի գաղափարական սահմանը: Սակայն չունենալով զարգացման նյութական յերաշխիք, զուրկ տիրող պետականության հովանավորությունից, աշխարհիկ բովանդակություն վորոնող դպրոցն ու ուսուցիչն ամփոփվում են ազգային բացառականության շրջանակներում և խարխափում «հոգևորի» դատարկ տարածության մեջ: Այստեղ կար «գաղափար», բայց չկար մտքի ռեալիզմ, գործնականություն:

Սեմինարիզմն ևր և մնաց հայ դպրոցի և այդ դպրոցից յեւած ազգային ինտելիգենցիայի գլխավոր հատկանիշը: Այդ հատկանիշն իր կնիքն եր դնում ազգային գրականության և բարեգործական հիմնարկի վրա: Անգամ դպրոցի սնած ազգային քաղաքական իդեալը յեւակետ չուներ անմիջական իրականությունը. այն հաժում եր իրականության սահմաններից դուրս, ավետյաց յերկրում, միշտ տարամբոժ, միշտ անզգա դեպի հասարակական ուժերի ռեալ հարաբերությունը: Այստեղ զգալ եր տալիս իրեն քաղաքական ռոմանտիզմի փոխանցված նույն սնամեջ սեմինարիզմը:

Մեղանում բացակայում եր գրեթե խոշոր արդյունաբերությունը: Հայ պրոլետարիատն ու բուրժուազիան գտնվում էին հայկական բնաշխարհից դուրս: Հասկանալի յե, վոր բնաշխարհի հայ ուսուցիչը, վոր մասնայորեն նույնպես գյուղական մասյլ ու գորշ իրականության ծոցից եր դուրս յիկել և կապված եր

նույն իրականություն հետ, անհաղորդ պիտի մնար պրոլետարիատի հեղափոխական շարժմանն ու այդ շարժման միջազգային բնույթին: Մեկուսացած ազգային պատշանում, նա վորդեգրեց գաղութային բուրժուազիայի և բնաշխարհի քաղքենիության ազգային-քաղաքական մտայնությունը և դարձավ այդ մտայնության տիպական դրոշակակիրը գյուղական իրականության մեջ: «Վարժապետ» հասկացողությունը դարձավ սեմինարիատական մտածողության և քաղաքական ռոմանտիզմի համանիշը դպրոցում:

Հայ գյուղացուն շատ թանգ նստեց ազգային-քաղաքական այս վորոնումների պատմական շրջանը: Տաճկահայ կոտորածները, իմպերիալիստական պատերազմի հետևանքները, «միացյալ և անկախ» Հայաստանի դաժան տարիներն առատ արյուն քամեցին գյուղացու յերակներից և հիմնովին քայքայեցին նրա տնտեսությունը: Հայ գյուղացին յերես դարձրեց բուրժուազիայից և քաղքենիությունից: Յեւ այս հանգամանքի մեջն և հենց Հայաստանի պրոլետարական հեղափոխության հաղթանակի գաղտնիքը: Ավելի համառեց իր զիրքերում գյուղական հայ ուսուցիչը: Այստեղ գործում եր տակավին մտքի կոնսերվատիզմը. սակայն յեթե համառում եր միտքը, ավելի համառ ելին փաստերը: Խորհրդային իշխանության հաստատած խաղաղությունը, ազգային խնդրի լուծումը, քառամյա կառուցողական աշխատանքները, մասսաների աճող համակրանքը դեպի կոմունիստական կուսակցությունը, ուսուցչության կենցաղի բարվոքումը զայիս ելին վերջիվերջ փշրելու նաև ուսուցչի քաղաքական կոնսերվատիզմը: Ուսուցչական մաս-

սայի քաղաքական տրամադրութիւնների հսկայական
բեկումն այսոր իրողութիւնն է նաեւ մեզանում:

ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԲԵԿՈՒՄԸ

Յեա ասացի արդեն, վոր ուսուցչութեան քաղա-
քական տրամադրութիւններն այս բեկումն առնչու-
թիւնն ունի մեր կուսակցութեան և խորհրդային
իշխանութեան դեպի նա հայտնաբերած վերաբեր-
մունքի հետ: Մեր վերաբերմունքի բեկումը կապ
ունի, սակայն, վոր միայն ուսուցչութեան տրամա-
դրութիւններն բեկման հետ, այլ նախ և առաջ այն
հիմնական խնդիրների հետ, վորոնք հեղափոխութեան
զարգացման շրջանում ծառանում եյին պրոլե-
տարիատի և նրա ղեկավար կազմակերպութիւնների
առաջ: Անհրաժեշտ է պարզել այս միտքը:

Հոկտեմբերյան հեղափոխութեան նախորդակին
և հեղափոխութիւննից անմիջապես հետո մեր զըլ-
խավոր ձգտումն եր մերկացնել մասսաների առաջ
բուրժուական դեմոկրատիայի բնույթը, կազմալուծե
հին բանակը, փշրել պետական հին ապարատը: Քանի
դեռ փոքր եր մեր կուսակցութիւնը և սահմանափակ
— կազմակերպչական և լուսավորական մեր աշխա-
տանքի ծավալը, քանի դեռ մեր առաջ անմիջապես
չեյին ցցված կազմակերպչական և կառուցողական
մեծ խնդիրներ, մեզ համար ուսուցչական մասսայի
գործակցութիւնը սուր անհրաժեշտութիւնն չեր,
բնականաբար:

Այնչափ, սակայն, վորչափ՝ իշխանութիւնը
նվաճելուց հետո անցանք նոր բանակի և պետական
նոր ապարատի կազմակերպութեան՝ ուսուցչական

մասսայի գործակցութեան, անհրաժեշտութիւնը պի-
տի զգալի դառնար միշտ ավելի մեծ չափով: Կու-
սակցութիւնը պետք է նպատակ դնէր իրեն՝ նվաճել
ուսուցչական մասսայի համակրանքը, ոգտագործել
նրա կուլտուրական ուժը բաճակի յեզ խորհուրդ-
ների կազմակերպութեան ասպարիզում: Քաղաքա-
ցիական պատերազմների շրջանում մասսաների քա-
ղաքական ազդեցիկան և պրոպագանդան մեր հաղ-
թանակի խոշոր նախապայմաններից մեկն եր: Կուլ-
տուրական աշխատանքին այդ պայմաններում պետք
է հատկացնել իր կարևոր տեղը:

Ավելի մեծ կարևորութիւն պիտի ստանար
կուլտուրական աշխատավորի նշանակութիւնը քաղա-
քացիական պատերազմներից հետո, յերբ անցանք
ճեփսակաճ-կառուցողական աշխատանքների կազ-
մակերպութեանը: Բայց միանգամայն բացառիկ ան-
հրաժեշտութիւն պիտի դառնար այդ աշխատանքը
նոր ճեփսակաճ քաղաքականութեան պայմաններում,
յերբ լուսավորութեան ֆրոնտի ամրացումը դառնում
եր տնտեսական ֆրոնտի պաշտպանութեան նախա-
պայմաններից մինը:

ՅԵՐԲՈՐԴ ԺՐՈՆՅԸ ՆՈՐ ՑՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՄԵԶ

Նոր տնտեսական քաղաքականութեան շրջա-
նում ժամանակավոր նահանջ ենք անում մասնավոր
նախաձեռնութեան, մասնավոր սեփականութեան,
մասնավոր կապիտալի առաջ: Նոր տնտեսական քա-
ղաքականութեան շրջանում զարգանալու վորոշ հնա-
րավորութիւնն է ստանում մանր բուրժուական տա-

րկրքը, կապիտալիզմի տնտեսական անարխիան, Սակայն մանր բուրժուական աճող տարերքը, կապիտալիզմի տնտեսական անարխիայի զարգացումը հանդուրժելի չե խորհրդային իշխանություն տնտեսական սխտեմի մեջ, վորչափ պրոլետարիատը հակադրում է դրան արտադրության և բաշխման կոոպերացումը, պետական առևտուրը, պետական արդյունաբերության ամրացման և աստիճանական ելքադրականացման քաղաքականությունը: Միայն այդ քաղաքականությունն է, վոր **ճճճճճճճճ** նախապայման է ստեղծում մասսաների հավաքման ու կազմակերպության համար, միայն այդ քաղաքականությունն է, վոր չհղճացնում է կապիտալիստական ռեստավրացիայի վտանգը և դարձնում է նեպը դեպի սոցիալիզմն առաջնորդող նպատակահարմար ուղի:

Բայց զարկ տալ տնտեսության կոոպերացման, բարձրացնել հասարակականորեն կազմակերպված աշխատանքի արտադրողականությունը, ամրացնել պրոլետարիատի ձեռքում առևտրի և արդյունաբերության տիրող բարձունքները, նշանակում է ձեռնարկել վոռակյալ աշխատավորների վերադասարանման, բարձրացնել մասսաների արտադրական ունակությունը, հաղորդակից անել նրանց կուլյտուրային, լուսավորությունը: Յեվ ապա՝ ի՞նչ է նշանակում հավաքել, կազմակերպել մասսաներին: Այդ նշանակում է՝ բարձրացնել մասսաների գիտակցությանը, հասցիալիքը: Առանց այդ դիսցիպլինայի՝ չի կարող խոսք լինել պլանայափ տնտեսության մասին: Առանց դրան կը հաղթահարի մեզ մանր բուրժուական տարիքը:

Հին մուշտրայի տեղը, վոր տարվել է բուր-

ժուական հասարակություն մեջ մեծամասնություն հակառակ,—ասում է ընկ. Լենինը—մենք ղենում ենք դիտակցական դիսցիպլինը բանվորների և գյուղացիների, վորոնք դեպի հին հասարակությունն ունեցած իրենց ատելությունը միացնում են պայքարի միացման և կազմակերպման կարողությունն ու պատրաստակամությունը, վորպեսզի ահագին յերկրի յերեսով տարանջատ, մաս-մաս յեղած, ցաք ու ցրիվ փռված միլիոնների և հարյուր միլիոնների կամքից ստեղծենք միասնական կամք, վորովհետև առանց այդ կամքի մենք անխուսափորեն կը ջարդվենք: Լենինի շեշտած այս հանգամանքն է հենց, վոր հարկադրում է մեզ առանձին կարևորություն տալ **ՅԵՐՐՈՐԳ ՔՐՈՆԵՅԻՑ** նոր տնտեսական քաղաքականություն ընդհանուր սխտեմի մեջ:

Նոր տնտեսական քաղաքականությունը վոչ միայն տնտեսական նոր խնդիրներ է ղենում պրոլետարիատի հեղափոխության առաջ, այլև առաջ է քաշում սոցիալական նոր խնդիրներ: Նոր տնտեսական քաղաքականության ժամանակ վորոշ սահմաններում վոտքի յե յեկնում դարձյալ բուրժուական, մասնավոր արդյունաբերողն ու առևտրականը, Գյուղում նոր տնտեսական քաղաքականությունը նշանակում է գյուղատնտեսական ափելցուկի ազատ վաճառք, նշանակում է կուլակի սոցիալական ազդեցության վտանգ: Կուլակը, չարչին, մասնավոր առևտրականը սոցիալական վտանգ են ստեղծում պրոլետարական հեղափոխության համար, քանի վոր ամեն մի սոցիալական ուժ, որպեսզի ձգտում ունի վերջի վերջո քաղաքական ուժ դառնալու: Գյուղի

24445-19

կուլակը, չարչին, մասնավոր առևտրականը քաղաքի նեղմանի հետ մեկտեղ արդեն իսկ մատնում են այդ ձգտումը՝ տնտեսապես գերեզմարել միջին ու չքավոր գյուղացուն, դարձնել նրան իրենց քաղաքական ու դասակարգային ձգտումների իրագործման պատվանդան։

Այստեղ ևս բավական չէ, վոր պրոլետարիատը ձգտի հաղթանակող լինել տնտեսական մրցության ասպարիզում։ Բավական չէ, վոր նա ձգտի տնտեսական կապ ստեղծել գյուղի հետ, տնտեսապես իշխել գյուղին։ Անհրաժեշտ է, վոր տնտեսական հաղթանակին ընդառաջի նաև գյուղացիական մասսայի գիտակցությունը։ Անհրաժեշտ է, վոր գյուղացին գիտակցի այն վտանգը, վոր սպառնում է իրեն բուրժուազիայի հաղթանակից, գիտակցի, վոր միայն բանվորի և գյուղացու կապն է, վոր յերաշխավորում է գյուղատնտեսության զարգացումը, գյուղացու աստիճանական փոխանցումը դեպի տնտեսական սոցիալական ավելի բարձր կենցաղի։

Առանց այդ գիտակցություն չի կարող խոսք լինել գյուղական մասսայի հեղափոխական ինքնագործություն մասին, բանվորի և գյուղացու ամուր դաշինքի մասին։

Այս գիտակցությունը, վոր բանվորության յեվ գյուղացիության հեղափոխական ինքնագործության ճանապարհաման է, չի կարող մշակվել մասսայորեն, յեթե չմիջամեսի մասսայական ուսուցիչը։ Յեվ այս նկատառումով է հենց, վոր հեղափոխություն մեծ առաջնորդը, ընկ. Լենինը թելադրում է իր վերջին պատգամը՝ «Անհրաժեշտ է, — ասում է նա, — սխտեմա-

բաբ ուժեղացնել ժողովրդական ուսուցչների կազմակերպման աշխատանքը, վորպեսզի նրանք գաղափարաբար բուրժուական հանրակարգի հեճակես լինելուց, — ինչ վոր նրանք յեղել են մինչ այսօր բոլոր կապիթալիստական յերկրներում, — յեվ հեճակես գաղափարաբար հանրակարգին, վորպեսզի նրանց միջոցով գյուղացիությունը հեռացվի բուրժուազիայից յեվ գառն կնքի պրոլետարիատի հետ»։

Լենինը շոշափում է այստեղ հեղափոխություն հիմնական խնդիրը, բանվորի և գյուղացու դաշինքի խնդիրը և այդ խնդրի լուծման մեջ վերապահում է ժողովրդական ուսուցչին չափազանց կարևոր դեր։ Մասսաների բաղաժանան լուսավորության գործում նա հատկացնում է ուսուցչին չափազանց պատասխանատու պաշտոն։ Այդ պաշտոնը պետք է կատարի ժողովրդական ուսուցիչը, մանավանդ գյուղական իրականություն մեջ, այսինքն՝ այն մասսաների շրջանում, վորոնց գիտակցությունն այնքան հետամնաց է ու խավար, վորոնք այնքան դժվարություններ են յենթարկվում գիտակցական գիտելիքների, վորոնց լուսավորական գործի կազմակերպությունը դրված է այնքան խոշոր դժվարությունների առաջ։

Այստեղ այսուհետևից պետք է սկսել ամեն ինչ։ Այստեղ նախ և առաջ, և ամենից շատ յեռանդ պիտի սպառնա դեռ անգրագիտության վերացման համար։ «Անգրագետ մարդը, — ասում Լենինը, — քաղաքականությունից դուրս է գտնվում, նրան նախ և առաջ հարկավոր է այբուբենն սովորեցնել։ Առանց դրան կամիայն լուր, բամբասանք, զրույց, նախապաշարում, բայց վոչ՝ քաղաքականություն»։

Ֆրագիտութիւնը դեռ քաղաքական լուսավորութիւնն է, սակայն չկա քաղաքական լուսավորութիւն առանց գրագիտութեան: Ավելին՝ առանց դրան չկա քաղաքականութիւն, հետեւեալ խոսք չի կարող լինել նաև նոր տնտեսական քաղաքականութեան մասին: «Յիթե չի լուծված տարրական այդ խնդիրը, — ասում է Լենինը, — ծիծաղելի յե խոսել նոր տնտեսական քաղաքականութեան մասին: Միայն այս փաստը բավական է շեշտելու, թե վորքան վճռական նշանակութիւն է նվաճում նոր տնտեսական քաղաքական պայմաններում «յերրորդ ֆրոնտի» խնդիրը, ու վորքան խոշոր կարևորութիւն է ստանում հեղափոխութեան ընթացքի համար մասսայական այն ուսուցչի գործակցութիւնը, վոր զինվորազրկած է այդ ֆրոնտին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍՈՒՑՁՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՌԱՋ

Խորհրդային Հայաստանում մեր առաջ դրված են կառուցողական նույն հիմնական խնդիրները, վոր ծեծվում են այսոր բովանդակ Խորհրդային Միութեան սահմաններում: Յեւ մեր կյանքում յերևան են զարիսնույն այն դժվարութիւններն ու հակասութիւնները, վորից անկարող ենք խուսափել նոր տնտեսական քաղաքականութեան շրջանում: Խոսք կարող է լինել միայն դրանց հաղթահարելու մասին: Տնտեսական այն սոսկալի ավերածութիւնների հանդեպ, վոր ժառանգել ենք անցյալից, կուլտուրական հետամնացութեան և ազգայնական տրադիցիաների այն մթնոլորտում, վորտեղ ընթանում է այսուրև

մեր աշխատանքը՝ աշխատանքի կազմակերպութեան և մասսաների քաղաքական վերադաստիարակման խնդիրները մեզանում վորոշ դեպքերում յերբեմն նույնիսկ ավելի սուր են դրվում, քան Խորհրդային Միութեան ուրիշ վայրերում:

Դաշնակցական Հայաստանում ղեկավարող կուսակցութիւնը մտահոգված էր հասարակական հիւսիս, բազմեցնելու հարաբերութիւններ հետապնդելու: Անցյալից ժառանգութիւնն մնացած եփեսոսիկ ցեղասպանութեան կոնսերվատիվ, հակահեղափոխական այդ քաղաքականութեան նախադրյալը պիտի լինէր: Տիրող ազգայնութեան կարիքների բավարարութեան համար Դաշնակցութիւնը փորձում էր միայն ընդարձակել հասարակական հին հարաբերութիւնների և դրանց համապատասխանող ազգային եքստենսիվ տնտեսութեան տիրապետութեան շրջանը՝ «երբեօրեի»: Այստեղից էլ յեղնում է հենց դաշնակցութեան ջարդարար յեւ նվաճողական բաղադրականութիւնը:

Հայաստանի բանվորագյուղացիական հեղափոխութեան ցեղեց գաւազակցական Հայաստանի հասարակական հարաբերութիւնները: Մեզ շրջապատող պայմաններում մենք կարող էլ լինենք ազատիկ մասսաների գոյութիւնն ու կազմակերպել նրանց տնտեսութիւնը, յեթե անցնենք արտադրութեան ինքնեցիկ յեղանակներին: Դաշնակցականութեան դեմոքրիիզացիա էլ յեղնում յեկրի կուլտուրական ուժերը, այդ ուժերը ազգական-սպառնողական ցեղացականութեան ստեղծելու համար: Մենք մոքիիզացիայի յեցն յեքարելում յեկրի կուլտուրական

ուժեքը մեք առաջ ցցված արեագրական-կառու-
ցողական, առիասանճների կազմակերպության հա-
մար:

Սակայն ուսուցչական մասնագիտության առաջ տնտե-
սական-շինարարական աշխատանքներին մասնակի-
ցելուց զատ մեղանում եւս դրվում են սոցիալական-
հաղափական եւ բաղադրական-լուսավորական խնդիր-
ներ:

Դյուղի հասարակական շերտավորումը մեղանում
եւս գնալով ուժեղանում եւ: Թայֆայության հին
սքեմի տակ խորհրդային գյուղում տեղի յեն ունե-
նում նոր ձևավորվող դասակարգային բախումներ:
Այնտեղ, վորտեղ անկազմակերպ եւս հետամնաց
գյուղական չքավորությունը, գյուղական թայֆաները
գյուղական սորբաների խմբավորումներ են, վոր աշխա-
տում են իրենց ազդեցության յենթարկել գյուղական
մասսան: Այնտեղ, վորտեղ վերջինս վորոշ ինքնա-
գործություն եւ ցուցահանում, հաճախ նա ինքն եւ
իր միջից հրապարակ քաջում թայֆայական մի
խժրակցություն, վոր պայքարում եւ դորբաներին
գլխավորող թայֆայի գեմ: Հարկավոր եւ պատուել
թայֆայության շղարշը, յերևան բերել նրա դասա-
կարգային աստառը, պարզել գյուղական մասնագիտ
բախվող շահերի պարզ իմաստը եւ կազմակերպել
մասսաներին դասակարգային դիտակցված շահերի
հողի վրա: Յեմլայտեղ գյուղական ուսուցիչը շատ
բան ունի անելու:

Դյուղի դասակարգային հարաբերություններն
ստանում են հաճախ կրոնական յերանգավորում:
Այսպես եր քյանդերազություն պսիխոլը Նոր-Բայա-

գետի ե Յերեանի գավառներում, պոիզունների յե-
րեւելքը Հայաստանի մի շարք ուսասանակ գյու-
ղերում: Կղերն ու կուլակը նման միջոցով փոր-
ձում են գերեվարել գյուղական անգլիտակից մաս-
սան ե չեղոքացնել կուսակցության ու կոմսոմոլի
ազդեցությունը: Հակակրոնական պրոպագանդը, քա-
ղաքական-լուսավորական այն աշխատանքը, վորին
պիտի լծվի նման դեպքերում նաեւ գյուղական ու-
սուցիչը, մասսաների սոցիալական ազատագրման
նախապայմաններից մեկն ե գառնում այս պայման-
ներում:

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ
ԴԵՊՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Այոքան հիմնական, այսքան լուրջ ու ծանրա-
կիւ խնդիրներ ե առաջադրում պրոլետարական հե-
ղափոխությունը մասսայական ուսուցչի առաջ: Խըն-
դիրներ, վորոնց լուծելու համար պահանջվում ե,
վոր ուսուցիչն ինքը վերապատրաստվի քաղաքակա-
նորեն, վորպեսզի նախ ե առաջ իր համար պարզի
նոր աշխատանքի իմաստն ու հեռանկարը: Մասսայա-
կան ուսուցիչը վերադրել ե արդեն քաղաքական իր
տրամադրությունների բեկումը: Այդ բեկումը նոր
ուսուցչի տիպարը կազմվելու նախապայմանն ե
անշուշտ: Սակայն ինքնըստինքյան այդ գեմ բավա-
կան չե խորհրդային ուսուցչի իդեալին հասնելու հա-
մար: Դրա համար անհրաժեշտ ե քաղաքական հիմ-
նական դաստիարակություն, անհրաժեշտ ե, վոր ու-
սուցիչն ինքը հրաժարվի մուլթ ու բուլթ անցյալի

նախապաշարունակներից, մշակի նոր տեսակետ, նոր իդեոլոգիա: Անհրաժեշտ է, վոր մասսայական ուսուցիչը յուրացնի գլխավոր կոմունիզմի ուսմունքը և լենինյան այն պողպատե գիտությունը, վոր նիշում է պրոլետարական հեղափոխության գործնական ուղիները: Ազգային վարժապետը պետք է դառնա կոմունիզմի ուսուցիչ:

Այդպիսին դառնալու համար բավական չե սակայն, գրքեր կարդալ կամ դասախոսություններ լսել: Նոր ուսուցչի տիպարը, նրա աշխարհայացքը կարող է կազմակերպվել միայն գործնական աշխատանքի բովում: Խորհրդային ուսուցիչ լինել, նշանակում է հրաժարվել ֆրադի իշխանությունից, շահկապել թեորիան պրակտիկայի հետ, լինել գործի մարդ, լինել հեղափոխության ակտիվ զինվոր: Նոր ուսուցիչը չի շատանում կուլտուրական սպասարկությունը: Նա դիմում է դեպի հասարակական գործոն աշխատանք, դեպի քաղաքական ինքնագործություն, դեպի կենդանի կոմունիստական պայքար: Նոր ուսուցիչը պետական—հասարակական ապարատի հըս մասնակից չե և չպիտի լինի: Քանի վոր խորհրդային հասարակությունն ու պետականությունը կազմակերպվում է հեղափոխական սուր պայքարի ժամանակ, քանի վոր լուսավորության խորհրդային ապարատը մասսաների հեղափոխական ինքնագործության միջոց է, հեղափոխական ակտիվ աշխատանքի լծված մարդկանց կազմակերպություն է: Այստեղ դարձյալ պետք է հիշել Լենինի խոսքը՝ «Հարյուր հազարանոց ուսուցչություն՝ դա մի այնպիսի ապարատ է, վորը պետք է առաջ մղի աշխա-

տանքը, մտքեր արթնացնի, կռվի այն նախապաշարունակների դեմ, վոր դեռ գոյություն ունեն մասնակրի մեջ»:

ՈՒՍՈՒՑԶՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի շարքային ուսուցիչը լծվում է արդեն հեղափոխության գործոն աշխատանքին: Մասսայական ուսուցիչն սկսում է հասկանալ, զինվորագրվել «յերրորդ ֆրոնտին»: Նա լծվում է վոչ միայն լուսավորական սպեցիֆիկ որդանի աշխատանքին, այլ լինել նաև ռազմական ֆրոնտի աշխատակից և անտեսական ֆրոնտի զինվոր:

Ուսուցիչը կազմվում է արդեն մասսայական այն կազմակերպությունների հետ, վորոնք ղեկավարում են հեղափոխության ընդհանուր աշխատանքը և հարթում իր ուղիները: Իմ տրամադրության տակ կան անկետային տվյալներ, վորտեղից յերևում է, վոր այս համագումարին մասնակցող 217 հոգուց գյուղական և մասամբ քաղաքային խորհուրդների անդամ է՝ 32,7 տոկոս, փոխոգկոմիների 13,5 տոկոս, կոոպերատիվների 20,6 տոկոս, մասնակցում է այլ և այլ հասարակական աշխատանքների 32,7 տոկոս: Մամուլի աշխատակից է համագումարի 5 տոկոսը, խրճիթ-ընթերցարաններում աշխատում է 31,3 տոկոսը:

Այս թվերը ցույց են տալիս, վոր վոչ միայն խոշոր քաղաքական բեկումն է ապրել Հայաստանի ուսուցչությունը, այլ և լծվել է արդեն քաղաքական նոր աշխատանքի: Սակայն չպետք է վերադնահա-

անհրժեշտ է թվերը, քանի որ նրանք չեն ասում դեռ, թե վորքան գիտակցական վերաբերմունք են հայտնաբերում մասնաշաղկապի մեր կազմակերպությունների մեջ աշխատող ուսուցիչները կամ վորպիսի ակտիվություն են ցուցադրում նրանք այդ կազմակերպությունների աշխատանքներում: Յեւ զեռչպիտի մոռանալ, վոր համադրումներն մասնակցողները կազմում են Հայաստանի բովանդակ ուսուցչություն 10 տոկոսը միայն, և պիտի յենթադրել՝ նրա ամենից ակտիվ մասը:

Ուսուցչություն մեծ մասն անդամ է պրոֆմիություն: Սակայն քանի տոկոսն է դրանցից ակտիվ պրոֆեսիոնալ աշխատանքի բնագավառում: Բավական չէ, վոր ուսուցիչն անդամություն ասում ունենա գրպանում: Նա պիտի գիտենա պրոֆմիություն նպատակն ու դերը, պրոֆեսիոնալ դժով բարձրացնի լուսավորության գործի վորակը: Նա պետք է հեղաշրջի հին դպրոցը, ստեղծի աշխատանքի այն դպրոցը, վոր տակավին իդեալ է, բայց վոչ իրականություն: Սակայն լուսավորության աշխատավորների պրոֆմիությունը համընթաց կազմակերպություն չէ: Նա պետք է կապվի պրոֆեսիոնալ ընդհանուր շարժման հետ, միություն ստեղծի մտավոր ու ֆիզիքական աշխատանքի, նպաստի աշխատանքի ընդհանուր արտադրողականության աճմանը: Մասնավորապես գյուղում, ուսուցիչը պետք է լինի բատրակների կազմակերպության բարեկամը: Գյուղական ուսուցչունին պետք է անմիջական մասնակցություն ունենա պեղջկունիների շարժման մեջ, ակտիվ աշխատանք կատարի պատգամավորունիների ժողովներ:

Ուսուցիչը պետք է գործակցություն ցույց տա լենկոմյերիտմիություն և պատկոմներ գյուղական կազմակերպության: Անհրաժեշտ է, վոր նա աշխատակցի պատի լրագրին և թղթակցի քաղաքային թերթերին: Նա պետք է լինի գյուղական խրճիթ-ընթերցարանի մշտական այցելուն, գյուղական բնակի և շարժական կինոյի մեքանավոր աշակիցը:


Ամենից կարևորն է, ի հարկե, ուսուցչություն և կուսակցության կապի խնդիրը: Մեր կուսակցական լուսավորության բնագավառում անկուսակցական ուսուցիչները կարևոր դեր են խաղում: Անգամ մեր կուսակցական դպրոցներում նրանք գործնական աշխատանք են կատարում և այդ իմաստով կատարում են կուսակցական աշխատանք: Պետք է, վոր անկուսակցական ուսուցչությունը հաճախի կուսակցություն դռնապան ժողովները: Ուսուցչություն լավագույն, գործնական աշխատանքի մեջ փորձված տարբերին մենք ընդունում ենք կուսակցության շարքերը: Կուսակցությունը միջոցներ է ձեռք առել մատչելի դարձնելու ուսուցչական մասնաշաղկապ կուսակցական շրջիկ ու քաղդպրոցները:

Հիմնական խնդիրը բոլոր պարագաներում կուսակցության յեւ անկուսակցական ուսուցչության փոխհարաբերության խնդիրն է: Խոսում են յերբեմն այն մասին, վոր կուսակցությունը հավատ չունի դեպի անկուսակցական ուսուցչություն: Սակայն հավատ ասածը բնածին բարեմասնություն չէ, այլ գործնական մի վստահություն, վոր մշակվում է դրական աշխատանքի ընթացքում: Այդ աշխատանքն սկսված է հիմա, և այդ տեսակետից մենք արձանա-

գրուած ենք յերկուստեք՝ հարաբերություններ խոր
բեկում՝ մերձեցման իմաստով: Հերթական խնդիրն է
վերածել այդ մերձեցումը կենդանի գինակցության.
ուսուցչության անկուսակցական մասսան կուսակ-
ցության ղեկավարությամբ կոչվում է հեղափոխա-
կան աշխատանքի: Կուսակցության ղեկավարությամբ
ուսուցչական մասսան պեճ է գառնա բանվորի
յեվ գյուղացու հեղափոխական գաւիճի կենդանի
ողակը: Իր ծագումով Հայաստանի մասսայական
ուսուցիչը գյուղացի յե գրեթե 85 տոկոսով: Իր շա-
հերով նա կապված է պրոլետարիատի հետ, իր սո-
ցիալական դրությամբ ինտելիգենտ պրոլետար է: Հե-
տեաքար նա ի վիճակի յե և նա յե, վոր կուսակցու-
թյան ղեկավարությամբ պետք է գաղափարական
կենդանի կամուրջ լինի գյուղի և քաղաքի, բանվորու-
թյան և գյուղացիության միջև:

Հեղաշրջել մասսայական լուսավորության աղ-
բյուրները և լուսավորել հեղափոխության մասսայա-
կան ուղիները,— ահա այն հիմնական գաղափարը, վոր
ուղեցույց ունենալով Հոկտեմբերյան հեղափոխու-
թյան սկզբունքները, պիտի դառնան ահ Հայաստա-
նի ուսուցչական մասսայի առաջնորդը իր հասա-
րակական-քաղաքական ինքնադործության ասպարի-
զում: Կենսագործել ղեկավարող այդ գաղափարը,
նշանակում է արդեն լծվել պրոլետարիատի հեղափո-
խական պայքարին:





ՀՀ Ազգային գրադարան



NL0231217

47. 210

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.